




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24953

331.881

h-61

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

ԻՆԶՊԵՍ ԵՆ ԿԱՌՈՑՎՈՒՄ
ՄԵՐ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԻ-Ի № 47.

ՅԵՐԵՎԱՆ

1926

26 APR 2013

331.881

6-61

ար

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ.

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ ՄԵՐ ԱՐՇԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1003
13439

Թարգմանեց Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՇԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ № 47.

ՅԵՐԵՎԱՆ

1926

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ ՄԵՐ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՔԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆ ԿԱ ԽՍՀՄ-ում

Այժմ ԽՍՀՄ-ում կա ընդամենը քսանյերեք արհմիություն: Այս թիվը միանգամայն համապատասխանում է արհմիությունների շինարարության արտադրական սկզբունքներին և բղխում է ներկայիս ժողովրդական տնտեսության կազմակերպման ձևերից: Կարող ե պատահել, Վոր ապագայում փոխվի միությունների քանակը, յերբ Վոր կյանքը պահանջի այդ, բայց այժմ 23 միություններում են նախապես ու ամենանիստ ձևով սպասավորում են բանվորական մասնակցություն:

Մեր բոլոր արհմիությունները միևնույն նպատակներին ու խնդիրներին են ձգտում և ունեն միանգամայն իրար նման կանոնադրություններ: Արհմիությունները կառուցված են նույնպես ընդհանուր կանոնների համաձայն: Մեր միությունների նպատակների ու կառուցվածքի նույնությունը մեր արհեստակցական խոշոր առավելություններից մեկն է՝ համեմատած ուրիշ յերկրների արհարժման հետ:

ՔԱՆԻ ԱՆԴԱՄ ԿԱ ԽՍՀՄ-Ի ԲՈԼՈՐ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Համաձայն 1925 թվի ապրիլի 1-ի տվյալների բոլոր 23 միությունների անդամների ընդհանուր թիվը հասնում էր 6,950,484 մարդու *) Այս 7 միլիոնից քիչ պակաս վար-

*) Համաձայն նույն թվի հոկտեմբերի 1-ի նախնական տվյալների միությունների ընդհանուր թիվը աճել է մինչև 7,750,000 մարդ:

ձու բանվորներն ու ծառայողները միաձուլված են մի-
բնաանիքում, արհմիությունների մեջ: Միատեսակ չի արհ-
միությունների անդամների թիվը: Արհմիությունների մեծ
մասն ընդգրկում են արդյունաբերական բանվորներ: Մեզ-
նում արդյունաբերական արհմիությունների թիվը ասաներ-
կույն. դրանք են՝ մետաղագործները, ջուլհակները, մուսուկ-
արադորները, լեռնագործները, կաշուցողները, փայտա-
գործները, կաշեգործները, շաքարագործները, քիմիկները,
սպաղրիչները, կարողները և թղթեգործները: Այդ 12
միությունը համախմբում են մոտ 3 միլիոն մարդ. բոլոր
վորում, քանակապես առաջին տեղը բռնում է Ջուլհակ-
ների միությունը. վորն ընդգրկում է 624,137 մարդ, յեր-
կրորդը՝ մետաղագործների միությունը—618,482 մարդ:
Արդյունաբերական միություններից ամենափոքրը թղթե-
գործների միությունն է, վորը 1925 թվի ապրիլի 1-ին
ունեն 32,418 անդամ: Չորս միություն համախմբում են
տրանսպորտի և կապի աշխատավորներին: Դրանք են—Շրա-
յին հաղորդակցության, յերկաթուղիների, տեղի փոխա-
դրողների և կապի (փոստ և հեռագիր) միությունները:
Այս միությունները համախմբում են 1 միլիոն 200 հազա-
րից ավելի անդամներ. (միայն յերկաթուղայիններն ունեն
805,588 մարդ): Հետևյալ չորս միությունները պետական
հատարակական յեվ այլ հիմնարկությունների ու կազ-
մակերպությունների աշխատավորների միություններն են,
վոր ընդգրկում են մոտ 2 միլիոն մարդ: Դրանք են—Երա-
տավորության աշխատավորների (Երատշխի), Խորհրդային
և առևտր. ծառայողների (Խորառծառի), բժշկատանիտա-
րական և արվեստի աշխատավորների (գեղաշխի) միու-
թյունները: զուդսիսեսուական բանվորներին համախմ-
բում է գյուղի և անտառի աշխատողների միությունը, վորն
ունի մոտ կես միլիոն անդամ: Վերջապես մնում են ժո-
ղովրդական աննդի (народный) և կոմունալիկների միու-
թյունները, վորոնք միասին ունեն մոտ 350,000 անդամ:

Այն բանվորը, վոր մի արտադրությունից փոխադրվում է
մյուս արտադրությունը, նա իր նախկին միությունից
զուրս է գալիս և մտնում է նոր միությունը՝ բոլոր ար-
տադրության բնույթի: Յեվ պետք է ասել, վոր այդ փո-
խադրությունը չափազանց հեշտ ու հասարակ բան է.
պարզապես նախկին միությունը հաշվառումից հանում է,
իսկ նորը հաշվառման է յենթարկում:

ԻՆՉՈՒ ԶԻ ԿԱՐԵԼԻ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՅԵՐԿՈՒ ԱՐԶՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼԻՆԵԼ

Միաժամանակ յերկու արհմիության մեջ լինել չի
կարելի: Դա միութենական աշխատանքի մեջ անհղին ան-
կանոնություն կմտցնի: Բանվորը չի կարող յերկու միու-
թյունների կյանքին ել ակտիվ կերպով մասնակցել: Կա-
մա-ակամա նա պիտի կտրվի մի միությունից և հատ-
կապես այն միությունից, վորը պալատել է նրան ծա-
ռայել: Եյապես բանվորին միշտ ել ծառայում է մի միու-
թյուն, այն միությունը, վորը համախմբում է այն արտա-
դրության բանվորներին, վորի մեջ աշխատում է ավյալ
բանվորը: Պարզապես, միանգամայն աննպատակահարմար
ու անիմաստ բան է մնալ նախկին միության մեջ վորպես
«պատվավոր» անդամ: Միությանը հարկավոր են վոչ թե
«պատվավոր» անդամներ, այլ ակտիվ անդամներ: Վերջա-
պես, միաժամանակ յերկու (զուցե և ավելի) միության
մեջ լինելը կխառնե միության անդամների թվի հաշվառ-
ման գործը:

ԿԱՐՈՂ ԵՆ ԱՐԴՅՈՔ ԱՐԶՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԱՄԲՈՂՋ ՄԱՍՍԱՅՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՌԱՋ ՏԱՆԵԼ

Միութենական կյանքին ակտիվ մասնակցություն
ցույց տալը միանգամայն անհրաժեշտ է, այդ մենք բա-
յատրել ենք «Արհմիություններն ու նրա անդամները»

գրքույկի մեջ: Բայց և այնպես, մասսայի ակտիվությունը, նրա մասնակցությունը միութենական աշխատանքներին, չպիտի հասկանալ, թե մասսան պատասխանատու չե ու պարտավոր ե միութենական աշխատանքներում: Մասսան չի կարող այդպիսի պատասխանատվություն վերցնել իր վրա և չի կարող մասսայորեն միութենական աշխատանքն առաջ տանել:

Աշխատանքը կատարում են և պատասխանատու չեն ընկերված մարդիկ: Բանվորները նրա համար չեն կարող ամբողջ մասսայով միութենական աշխատանք տանել, վորովհետև նրանցից ամեն մեկը մի հիմնական զբաղմունք ունի—աշխատում է արտադրության մեջ, վորը նրանցից շատ ժամանակ և ուժեր է խլում: Իսկ միության խմբերը շատ բարդ ու բազմազան են: Այդ խմբերները հաջողությամբ լուծել կարելի չե միայն այն ժամանակ, յերբ ճիշտ գրված կլինի միութենական աշխատանքը: Վոր կողմն ել նայենք, կտեսնենք, վոր աշխատանքը շատ խնամքով կազմակերպված է. բոլոր ձեռնարկություններում, յերկաթուղու վրա, բանակում, նավատորմում, ամեն տեղ աշխատանքները ղեկավարում են ու նրանց համար պատասխանատու չեն հատուկ վորոշված մարդիկ—բանակում՝ հրամանատարական կազմը, արտադրության մեջ՝ տեսուչները, վարիչները և այլն: Հասարակական կազմակերպություններում, ինչպիսին հանդիսանում է և միութենական կազմակերպությունը, ղեկավարներին ընտրում են կազմակերպության անդամները, իրենց միջից, միության անդամներից նրանց, վորոնք ամենից լավ համապատասխանում են այդ կոչմանը: Մեր արհմիություններում նույնպես այդ կարգն է ընդունված: Մասսան միութենական պաշտոնների համար ընտրում է ամենափորձված, դասակարգային գիտակցությամբ գինված և հարգված միության անդամներին: Այդ ընտրված մարդիկ կազմում են միութենական մարմինը, ճիշտ այնպես, ինչպես որինակ

ժողովրդական տնտեսություն աստարիզում վորոշ ճյուղի այս կամ այն արտադրության ղեկավարները կազմում են տնտեսական մարմին:

ԻՆՉՈՒ ՅԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Միութենական մարմինը, ըստ կանոնադրության, միշտ իրավունքներ ունի. նա չե տանում միութենական աշխատանքը և իր բոլոր քայլերի, բոլոր գործերի համար պատասխանատու չե իր ընտրողների առաջ: Այսպիսի կարգը համապատասխանում է միութենական աշխատանքի շահերին, միանգամայն նպատակահարմար է և կյանքում արդեն ցույց է տվել, վոր լավ ձև է:

ՎՈՐՆ Ե ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՄԵՆԱՍՏՈՐԻՆ ՄԱՐՄԻՆԸ

Միութենական ամենաստորին մարմինն է գործարարական (գործարանում) և տեղական (հիմնարկության մեջ):

ՎՈՐՏԵՂ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԳՈՐԾԱՐԿՈՄԸ (ՏԵՂԿՈՄԸ)

Միութենական այդ սկզբնական մարմինը ստեղծվում է, յերբ ձեռնարկության մեջ կան ամենաքիչը 25 բանվոր կամ ծառայող: Իսկ յեթե 25-ից պակաս են, այդ դեպքում գործարարների փոխարեն ընտրվում է պրովիդուր վորը և տանում է միութենական աշխատանքը: Իրարից մոտ գտնվող մանր ձեռնարկությունները կարող են միասնալ և կազմել միացյալ տեղակում: Այդպիսի միացյալ տեղակումի կազմը (անդամները) ընտրվում է կամ պրովիդուրներ և կամ այդ ձեռնարկությունների պատգամավորական ժողովներում:

Ո՞Վ Ե ԸՆՏՐՈՒՄ ԳՈՐԾԱՐԿՈՄ (ԿԱՄ ՏԵՂԿՈՄ) ՅԵՎ ԻՆՉՔԱՆ ԺԱՄԱՆԱԿՈՎ

Գործարարում (կամ տեղում) ընտրում են ձեռնարկության բոլոր բանվորներն ու ծառայողները, վորոնք իրա-

վումք ունեն միության անդամ լինելու յեւ լրացել են 18 տարին: Գործարկումը (կամ տեղկումը) ընտրվում է 6 ամիս ժամանակով: Ներկայումս միութենական կազմակերպությունները քննում են գործարկումների (կամ տեղկումների) աշխատանքի ժամկետը մինչև մեկ տարի յերկարացնելու հարցը:

Ձեռնարկություն մեջ վորքան շատ բանվորներ լինեն այնքան ավելի շատ գործարկումի (կամ տեղկումի) անդամներ կընտրվեն: Ընտրվողների թիվը կարգավորված է հատուկ կանոնադրությամբ: Անհրաժեշտ է նկատել, վոր միությունը գործարկումի—ավյալ ձեռնարկություն մեջ վարձու աշխատանք կատարող լուր աշխատավորների շահերը պաշտպանող մարմնի ընտրությունը չի արգելում մասնակցել նաև այն բանվորներին ու ծառայողներին, վորոնք թեպետ իրավունք ունեն միության անդամ գրվելու, բայց և այնպես, ինչ-ինչ պատճառներով միության անդամ չեն: Գործարկումը (կամ տեղկումը) պաշտպանում է և՛ առաջինների և՛ յերկրորդների շահերը:

ԿԱՐԵԼԻ՞ ՅԵ ԱՐԴՅՈՔ ԳՈՐԾԱՐԿՈՄԻ (ԿԱՍ ՏԵՂԿՈՄԻ) ԱՆԴԱՄ ԸՆՏՐԵԼ ՎՈՋ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԻՆ

Արհմիությունը չկազմակերպված բանվորներին գործարկումի (կամ տեղկումի) ընտրությունը մասնակցելու իրավունքից չի զրկում, սակայն վոչ միության անդամին գործարկումի (կամ տեղկումի) անդամ ընտրել չի կարելի: շատ հասկանալի պատճառներով: Յեւ իսկապես, ի՞նչ իրավունք ունեն վոչ միության անդամներն ընտրվելու միութենական մարմնի մեջ, վճռելու այնտեղ միութենական հարցեր ու միութենական աշխատանք տանելու: Գործարկումը (կամ տեղկումը) միութենական մարմին է, հետևապես, գործարկումում (կամ տեղկումում) կարող են ընտրվել միմիայն արհմիության անդամները:

ԻՆՁԻ՞ ՅԵՆ ԱՆՀՐԱԹԵՇՏ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Ճիշտ նույն պատճառներով եւ պատգամավոր կարող է լինել միմիայն արհմիության անդամը (պատգամավորությունը միութենական պաշտոն է): Պատգամավորները ընտրվում են այն ձեռնարկություններում, վորտեղ կան 200-ից վոչ պակաս բանվորներ ու ծառայողներ: Ընտրությունը կատարվում է վորոշ նորմայով, որինակ 20 հոգուց մեկ պատգամավոր: Ընտրությունները տեղի յեն ունենում ընդհանուր ժողովներում, խոշոր ձեռնարկություններում ըստ համաքարությունների, արհեստանոցների կամ բաժանմունքների: Պատգամավորներին ընտրում են համաքարության կամ բաժանմունքի բոլոր բանվորներն ու ծառայողները՝ 6 ամիս ժամանակով: Ընտրված պատգամավորները պատգամավորական ժողովների յեն հավաքվում առնվազն ամիսը 2 անգամ:

Պատգամավոր ընտրված միության անդամը կենդանի կապ է ստեղծում գործարկումի յեւ լրավորական մտապալի միջեւ: Միութենական աշխատանքի մեջ քաշված լինելով՝ պատգամավորները, վորոնց վրա վորոշ պարտականություններ է դրվում, արհեստակցական-հասարակական աշխատանքի վարժություն են ձեռք բերում: Նրանք սկսում են զիտակցաբար վերաբերվել բանվորների կենցաղային աշխատանքային, արտադրական կարիքներին ու շահերին: Բացի այդ, նրանք քաղաքական հարցերի մեջ են մտնում և պատրաստվում են, վոր ապագայում առաջ քաշվեն ավելի պատասխանատու միութենական աշխատանքների մեջ: Այսպիսով պատգամավորը գործարկումի ու միութենական այլ մարմինների անդամներին փոխարինողն է: Պատգամավորական ժողովների կազմակերպությունը հարկավոր է նաև այն պատճառով, վոր բազմամարդ ընդհանուր ժողովներ այնքան եւ հաճախ չի լինում գումարել, ինչպես վոր պահանջում է միութենական լարված աշխատանքը, իսկ

պատգամավորական ժողովներ հրավիրվում են և՛ հեշտ և՛ արագ: Բացի այդ, պատգամավորական ժողովներում ընկերական զրույցի մեջ, բանվոր պատգամավորները ավելի ազատ և շատ են արտահայտվում, քան թե բազմաժանր ընդհանուր ժողովներում: Սակայն և այնպես, պատգամավորական ժողովն ինքնին չպիտի փոխարինե ընդհանուր ժողովին: Պատգամավորական ժողովը մեծ մասամբ նախապես ֆևնոքային և ստեղծում այն հարցերը, վորոնք հետ ֆևնոքային են դրվում ընդհանուր ժողովում: Պատգամավորական ժողովներում նշանվում են գործարկումի ու իր հանձնաժողովների ծրագրերները, լավում և գործարկումի ու իր հանձնաժողովների աշխատանքների հաշվետվությունը, ինչպես և ձեռնարկություն վարչություն, կոոպերատիվի, ապգանձարկղի և բանվորներին սպասարկող այլ կազմակերպությունների գեկուցումները:

Համաձայն արհմիությունների VI համագումարի վորուման գործարկումի հաշվետու յե պատգամավորական ժողովի ստաց: Գործարկումը պարտավոր և կյանքում կիրառել պատգամավորական ժողովների բոլոր վորոշումները, յեթե զրանք չեն հակասում միութենական բարձրագույն մարմինների վորոշումներին: Քանի վոր պատգամավորական ժողովն այդպիսի մեծ լիազորություններ ունի, ապա միություն անդամ պատգամավորի վրա խոշոր պատասխանատվություն և ընկնում: Ամենից ստաց պատգամավոր պիտի և հեղյակ լինի գործարկումի աշխատանքներին: Լավ խմանալով բանվորների կարիքները, շահերն ու ցանկությունները՝ պատգամավորը ամեն կերպ պիտի աշակցի գործարկումին, վոր նա կարողանա բավարարել բանվորների պահանջները: Կյանքը փաստորեն ցույց տվեց, վոր շնորհիվ պատգամավորական ժողովների գոյություն, ձեռնարկություններում զգալի չափով լավացավ միութենական աշխատանքը, ավելի շատ բանվորներ մտան աշ-

խատանքի մեջ և ամրապնդվեց գործարկումի ու մասնաշխատանքի:

ՎՈՐՆ Ե ՀԱՄՔԱՐՈՒԹՅԱՆ ԼԵԱՋՈՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Շատ մեծ ձեռնարկություններում, (վորտեղ ամենաբիշը 1000 հոգի բանվոր կա) գործարկումի ու մասնաշխատանքի միջև կապն ու ժեղացնելու համար և միութենական առարկա աշխատանքներն ավելի լավ տանելու նպատակով ամեն մի համքարություն մեջ ընտրվում և գործարկումի լիազոր (համքարություն. կազմակերպիչ): Յեթե համքարություն մեջ 300-ից ավելի բանվորներ կան, ապա մեկ լիազորի փոխարեն ընտրվում են մի քանի հոգի, վորոնք կազմում են համքարության թիվը: Համքարություն լիազորը կամ բյուրոն համքարություն մեջ կատարում են ամբողջ միութենական աշխատանքը՝ գործարկումի անունից, հետևում են, վոր իրադրություն միություն ու գործարկումի բոլոր վորոշումները, համքարություն բանվորներին բացատրում են այդ վորոշումների միտքը, գործարկումի համաձայնությունը ու մասնակցությունը հրավիրում են բանվորների համքարային ժողովներ, քաշում են նրանց միութենական աշխատանքների մեջ և այլն:

Մենք տեսնում ենք, վոր միութենական սկզբնական կազմակերպությունը կառուցված և այնպես, վոր միասնական համապատասխանում և բանվորների կարիքներին ու պահանջներին: Բացի այդ, նա այնպես և կառուցված, վոր ամեն մի բանվոր ցանկացած գեղքում լիակատար հնարավորություն ունի այս կամ այն մասնակցություն ունենալ միութենական աշխատանքներին:

ՎՈՐՆ Ե ԱՆԴԱՍՏԱՎՃԱՐՆԵՐԸ ՀԱՎԱՔՈՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Միութենական աշխատանքներին մասնակցելու ձևերից մեկն էլ, ի միջի այլոց, անգամավճարներ հավաքելն է:

Այն ձեռնարկություններում, ուր մեծ թվով բանվորներ են աշխատում, շատ դժվար կլինեն, յեթե գործարկումն անմիջականորեն հավաքեն անդամավճարները: Նա ստիպված պիտի լինեն բանվորներին մի քանի ժամ հերթի կանգնեցնել: Դրա համար ել սյուպիսի տեղերում անդամավճարները գանձում ե հատուկ անձնավորություն: Վորովհետև անդամավճարներ հավաքելը միութենական աշխատանքների մի ձևն է, վորի մեջ ցանկալի յե քաշել ռուս ալիկի ռաբոյիկի րաւնիւրնեւ. ուստի այժմ անդամավճար հավաքողներ նշանակվում են վոչ միայն մեծ ալլ և փոքր ձեռնարկություններում:

Անդամավճար հավաքողներն ընտրվում են ձեռնարկության բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովում, (խոշոր ձեռնարկություններում ըստ ցեղաների) նույնքան ժամանակով, ինչքան ժամանակով վոր ընտրվում ե գործարկումը: Ընտրությունը կատարվում ե այն հաշվով, վոր ամեն մի հավաքող ծառայի վորոշ թվով միության անդամների (50-ից վոչ ալեկի): Հավաքողը, իր գանձած անդամավճարներն անմիջապես հանձնում ե գործարկումին (կամ տեղկումին):

Այդ հավաքողի պարտականությունը միայն անդամավճարներ գանձելը չե, ալլ նա պետք ե նաև միութենական ազդեցությունը մատուցելի վրա սարսնելու միջնորդ նսնդիսանա: Կամ հավաքողը բանվորներին կրացարի անդամավճարի նշանակությունը, չի թույլ տա, վոր սխալ հասկացություն ունենան անդամավճարի մասին, ընկերական ազդեցություն գործ կղնի անկանոն վճարողների վրա և այլն:

Բացի այդ, հավաքողները համբարային, պատգամավորական և ընդհանուր ժողովներում իրենց ընտրողներին, ինչպես և գործարկումի նիստերին, գեկուցում են տալիս իրենց կատարած աշխատանքների մասին, առաջարկություններ են մտցնում անդամավճարները գանձելու գործը լավացնելու մասին և այլն:

Ինչքան ել փոքր ե հավաքողի գործը, բայց նա շատ մեծ դասխարակական նշանակություն ունի: Հավաքողը շարքային բանվորությունից աստիճանաբար դառնում ե արհմիության առաջավոր անդամ: Ի հարկե, հավաքողներն աշխատում են ձրի—փող չեն ստանում: Շատ քիչ միջոցներ ունի միությունը և չի կարող այդ սուղ միջոցներից վճարել այն աշխատանքի համար, վոր իրոք մենք բոլորս ել պարտավոր ենք ձրիաբար կատարել միության համար:

Ներկայումս, անդամավճարների գանձումը և հաշվառումը հեշտացնելու նպատակով, համաձայն ԽՍՀՄ-ի միությունների IV համագումարի վորոշման (վոր գումարվեց 1924 թվի նոյեմբերին) արհմիություններում, վորպես փորձ, կիրառվում ե մարկային սխտեմը:

Այդ մարկային սխտեմը հետևյալն ե: Միությունը բաց ե թողնում գանազան արժեքի մարկաներ: Հավաքողը գործարկումից ստանում ե այդ մարկաներից, համաձայն այն ցուցակի, վորով նա անդամավճարներ ե գանձելու: Միության ամեն մի անդամ հավաքողից գնում ե համապատասխան արժեքի մարկա այսինքն այն գումարի, ինչ գումար վոր կազմում ե իր անդամավճարը և գնած մարկաները փակցնում ե իր անդամատոմսի համապատասխան տեղը: Այս ձեով հավաքելու դեպքում հավաքողի համար ել հեշտ կլինի առանց վորևե տեղեկագրի հաշիվ տալ գործարկումին՝ ըստ իր ստացած մարկաների և գործարկումն ել իր հերթին հեշտությամը հաշիվ կտա իր վարչությանը:

ԻՆՉՈ՞Ւ ԱՄԵՆ ՄԻ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԻԱՅՆ ՄԵԿ
ԳՈՐԾԱՐԿՈՄ ԿԱՄ (ՏԵՂԿՈՄ) ԿԱ

Բոլոր ասածներէից պարզ յերեւում է, Վոր մի ձեռնարկութեան մէջ կարող է լինել միայն մեկ գործարկում (կամ տեղում):

Ամեն մի ձեռնարկութեան մի արտադրական ամբողջութիւնն է, ուստի և կարելի չէ տալ, Վոր մեզ մօտ պահվում է այս կանոնը—«մի արտադրություն—մի միութիւն»։ Այսպիսով ուրեմն՝ մեր միութեանները կառուցված են ըստ արտադրական սկզբունքի (ընդհանուր կանոնի)։ Համաձայն այդ սկզբունքի, Վորեւ արտադրութեան մեջ աշխատող բոլոր բանվորներն ու ծառայողները, անկախ նրանց պրոֆեսիայից կամ մասնագիտությունից՝ համախմբվում են մի լիակատար արտադրական միութեան մէջ։ Այսպէս որինսկ տեղատիլ արտադրութեան մեջ—տեղատիլ գործարանում աշխատում են ներկարարներ, գործողներ, մանողներ և այլն արհեստի ու մասնագիտութեան բանվորներ, բայց և այնպէս նրանք բոլորը մտնում են միեւնոյն արտադրական միութեան—ջուլհակների միութեան մեջ։

Ներկա պայմաններում արտադրական միութիւնը բանվորական միավորման ամենանպաստակաւարմար ձեւն է։ Այդպիսի միութեանն ավելի մեծ ուժ ու հարուստ միջոցներ է ունենում։ Յեթե մենք հրաժարվենք արտադրական սկզբունքից և սկսենք միութեանները կառուցել ըստ պրոֆեսիայի (գործողների միութեան, մանողների միութեան և այլն) այդ դեպքում ձեռնարկութեան մեջ այնքան մանր-մունր գործարկումներ կլինեյին, քանի տեղատեղի պրոֆեսիա վոր կա այդտեղ։ Այդ դեպքում, միութեանական աշխատանքը խառնիվիւր գործութեան մեջ կնկնէր։ Յերբեմն ել առանձին պրոֆեսիայի բանվորների շահերը կընդհարվեյին իրար, անխուսափելի կերպով թշուրիմացութեան-

ներ ու գոտութեաններ կառաջանային և ի վերջո ձեռնարկութեան բոլոր բանվորների շահերը մեծապէս կվնասվեյին։ Անկասկած կտուժեր և արտադրութեանը։ Գործարկումները կտապակվեյին իրենց յուզի մեջ, նրանց աշխատանքայնքը դուրս չեր գա իրենց նեղ համքարային կամ պրոֆեսիայի շահերի սահմաններից։ Ահա այս բոլոր թերութեանները վերացվում են լիակատար միութեանի կառուցման արտադրական սկզբունքի, Վորի շնորհիվ կարելի չէ լինում բոլոր հարցերը վճռել բոլոր բանվորների ձեռնարկութեան ու արտադրութեան ոգովին։

ԻՆՉՊԵ՞Ս Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ՄԵՐ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

(Տես հավելված 1.)

Քանի Վոր ամեն մի ձեռնարկութեան մեջ կա գործարկում, ապա ուրեմն՝ յուրաքանչյուր միութեանն ունի մեծ թվով գործարկումներ (կամ տեղիւններ)։ Որինսկի համար, վերցնենք Մոսկվան և իր նահանգը։ Այնտեղի արհմիութեաններից Վորն ել վերցնենք՝ տասնյակներով, նույնիսկ հարյուրներով գործարկումներ ու տեղիւններ ունեն։ Ի՞նչ հալի կհասնի Վորեւ արհմիութեան, յեթե նրա բոլոր գործարկումները ցրված աշխատանք տանեն և յեթե միեւնոյն արտադրութեան բանվորների մեջ կազմակերպչական միասնականութեան, միաձուլութեան չլինի։ Պարզ է, Վոր գործերը շատ վատ կգնան։ Ուրեմն՝ անհրաժեշտ է, Վոր լինի մի այնպիսի միութեանական բարձր մարմին, Վորը համախմբի, միացնի Մոսկվայի նահանգի (և քաղաքի) նույն արդյունաբերութեան բոլոր բանվորներին և ղեկավարի այդ մասսան ընդգրկող գործարկումների աշխատանքները։ Այդպիսի մարմին գոյութեան ունի. դա միութեանի և անկախական բաժինն է։

Բայց ԽՍՀՄ-ի մեջ միայն Մոսկվան չի մտնում. կան և ուրիշ քաղաքներ, նահանգներ շրջաններ, հանրապե-

սուբյուկտներ: Անհրաժեշտությունն է առաջանում ստեղծել մի ավելի բարձր միութենական մարմին, վորը միացնի ԽՍՀՄ-ի սահմաններում յեղած միութենական ամբողջ մասսան, մի մարմին, վոր միաժամանակ ընթացք տա ուղեկավարի միության տեղական բաժինների աշխատանքները: Այդպիսի բարձր մարմինն է հանդիսանում միության կենտրոնական կոմիտեն:

Ավելի ճիշտ ու հարմար կերպով բնութագրական կազմակերպություններին ծառայելու տեսակետից միությունը իր մասերը կազմել է խորհրդային իսխանությունների ակտիվներ, պոլիտեխնիկականներ և այլն պեսական բաժանումները, վոր կան ԽՍՀՄ-ում: Ինչպես հայտնի չէ, ԽՍՀՄ-ի մասերն են կազմում զաշնակից հանրապետությունները (Ռ. Խ. Ս. Ֆ. Հ., Անդր. Խ. Ս. Ֆ. Հ., Բել. Խ. Ս. Հ., Ուկր. Խ. Ս. Հ., Ուզբեկ. Խ. Ս. Հ. և Թուրքմեն. Խ. Ս. Հ.), վորոնցից շատերը բաժանվում են մի շարք ավտոնոմ հանրապետությունների ու շրջանների: Ստորաբաժանման հետեվյալ միավորն է նահանգը, վորն իր հերթին բաժանվում է գավառների: Միության անդամների ճնշող մեծամասնությունը, բացի հողի և անտառի աշխատավորներից մյուսները կենտրոնացած են քաղաքներում (հանրապետական, նահանգական կամ գավառային): Ահա հենց այդ քաղաքային կենտրոններումն էլ կազմվում են միության բաժիններն ու բաժանմունքները, վորն ընդգրկում է տրվյալ վայրի միության անդամներին:

ԻՆՁ Ե ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՑԵՆՏՐԱԼԻԶՄԸ
ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՋԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆ Ե»

Այժմ հարկավոր է պարզել այն հարցը, թե ինչպես և ումից են կազմվում այդ բարձրագույն մարմինները: Որինակ՝ Մոսկվայի նահանգ. բաժնի վարչությունն ումնից և ինչպես և կազմվում. գուցե վարչության կազմն

ընտրում են տեղական գործարկումները: Հենց բանն էլ այդ է, վոր՝ վոչ. միութենական բոլոր մարմինները, ցածից մինչեվ ամենաբարձր, գործարկումի նման ընկնում են կամ անմիջապես մատույնի կողմից յեվ կամ այդ մատույնից ընկնում պատգամավորների կողմից: Վոչ մի նշանակում գոյություն չունի. միութենական ստորին մարմիններն իրավունք չունեն նշանակելու կամ ընտրելու բարձրագույն մարմիններ: Բարձր մարմիններն են իրենց հերթին, իրավունք չունեն նշանակելու կամ ընտրելու ստորին մարմինների կազմը: Բոլոր դեպքերում, միութենական բոլոր մարմիններին մասսան է ընտրում:

Այսպիսի կարգը համապատասխանում է այսպես կոչված՝ «դեմոկրատական ցենտրալիզմ»-ի սկզբունքին: «Դեմոկրատական» բառը կազմված է հունական յերկու բառերից—«դեմոս»—վոր նշանակում է մասսա և «կրատոս», վոր նշանակում է ուժ (իշխանություն): Միության կազմակերպության դեմոկրատական ձևը, եյությունն այն է, վոր ամբողջ մատույնի նկատմամբ (ուժ, իշխանություն) է տրված ընկնությունների միջոցով մասնակցել միութենական բոլոր մարմինների կազմակերպմանը:

«Ցենտրալիզմն» էլ իր հերթին, կոչվում է կազմակերպության կառուցվածքի այն ձևը, յերբ նրա բոլոր մասերը կապված են իրար հետ այն կարգով, վոր ստորին մարմինները յենթարկվում են բարձրերին, ըստ վորում, կենտրոնում—բարձրագույն ղեկավար մարմնի մեջ միափոխվում են կազմակերպության բոլոր թելերը յեվ բոլոր մարմինները անպայման պատրաստվում են յենթարկվել այդ կենտրոնին:

ԽՍՀՄ-ի միությունները, վոր կառուցված են դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքներով, չեն թույլ տալիս, վոր կազմվեն այնպիսի միութենական մարմիններ, վորտեղ պաշտոնյաները նշանակվում լինեն: Ինչպես ասացինք, միութենական մարմինները վոչ թե նշանակվում են, այլ ընտրվում են մասսաներից, յեվ ամենից առաջ հենց այդ մատույնի առաջ էլ պատասխանատու յեն:

1003
13439

Միաժամանակ, ցենսորալիզմի ուժով միութենական ստորին մասին միտք յենթարկվում է իրենից բարձր մարմինն: Այսպես որինակ՝ Մոսկվայի գործարկողները յենթարկվում են միության Մոսկվայի նահանգական բաժնի վարչությանը: Նահանգական բաժնի վարչությունն էլ իր հերթին, յենթարկվում է միության Կենտրոնական Կոմիտեին: Այդպիսի յենթարկումն անշուշտ անհրաժեշտ է: Չէ՞ վոր, ինչպես արդեն վերևումն ասացինք, միութենական նահանգական մարմինը հենց նրա համար է կազմվում, վորպեսզի նահանգի սահմաններում ղեկավարի միութենական ամբողջ աշխատանքը, թույլ չտա, վոր տեղական գործարկողների աշխատանքների մեջ ցրվածություն ու թերություններ լինեն: Իսկ միության կենտրոնական կոմիտեն կազմվում է, վորպեսզի թույլ չտա, վոր միության տեղական բաժինների աշխատանքների մեջ ցրվածություն ու սխալներ լինեն:

ԻՆՉՊԵՍ Ե ՄԱՍՍԱՆ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ԸՆՏՐՈՒՄ

Այժմ տեսնենք, թե բանվորներն ու ծառայողները ինչ ճանապարհով են մասնակցում միութենական մարմիններ ստեղծելուն:

Գալառում կամ շրջանում միության անդամներին համախմբում է միության գավառային (կամ շրջանային) բաժինը:

Ի հարկե, հեշտ բան չէ ամբողջ գալառի միության բոլոր անդամներին հավաքել մի տեղ՝ միութենական հարցեր վճռելու և վարչություն—գավառային մշտական մարմին ընտրելու համար: Դրա համար միության անդամները ստիպված կլինեյին թողնել աշխատանքը, մեծ ծախսեր անելով անազին տարածություններ անցնել և այն ել, այդպիսի «ընդհանուր ժողովը», ի հարկե, չափազանց մեծածավալ ու խառնիխուռն կլիներ: Ահա հենց այդ պատճառով հրավիրվում է վոչ թե ամբողջ մաստան, այլ նրա

ընտրած ներկայացուցիչները, վորոնք կազմում են միության գավառային համագումարը: Համագումարի պատգամավորներն ընտրվում են բանվորների ու ծառայողների ընդհանուր կամ պատգամավորական ժողովներում, վորոշ նորմայով. որինակ՝ յեթե գավառում կան 1000 հոգի միության անդամ, հարմար է ընտրել 50-ից մեկ պատգամավոր և կստացվի 40 հոգուց համագումար:

Միութենական կյանքի հիմնական խնդիրները վճռելուց հետո՝ գավառական համագումարը մեծական աշխատանքի համար ընտրում է գավառային (շրջանային) բաժնի վարչություն: Սովորաբար վարչությունն ընտրվում է մեկ տարի ժամանակով և բաղկացած է լինում 5-7 անդամից ու 2-3 թեկնածուից: Հենց այդ համագումարումն էլ պատգամավորներ են ընտրվում միության նահանգական համագումարի համար:

Գալառի գործարկողներն առանց առարկության յենթարկվում են գավառային բաժնի վարչությանը և հաշվետու յեն նրանց առաջ՝ ինչպես բարձր միութենական մարմին:

Միութենական հետևյալ մշտական մարմինը նահանգական բաժնի վարչությունն է:

Նահանգական բաժնի վարչությունը ղեկավարում է բոլոր գործարկողների ու միության գավառայինների վարչությունների աշխատանքները. այլ խոսքով ասած՝ ղեկավարում է միութենական ամբողջ աշխատանքը իր նահանգի սահմաններում:

Միտնգամայն պարզ է, վոր նահանգական բաժնի վարչությունն արդեն վոչ մի կերպ չի կարելի ընտրել ամբողջ նահանգի միության անդամների ընդհանուր ժողովում: Փորձեցեք, որինակի համար, մի հարկի տակ հավաքել Մոսկվայի նահանգի ջուհակների միության 200 հազարից ավելի անդամներին: Պարզ է, վոր դա անհնարին բան է: Նահանգական բաժնի վարչությունն ընտրվում է մի-

ության նահանգային համագումարում, վորը նախագլխի միութենական բարձրագույն մարմինն է հանդիսանում:

Մեզանից ամեն մեկը կարող է և պետք է մասնակցի նահանգական համագումարի պատգամավորների ընտրությանը: Մեր այդ ներկայացուցիչ-պատգամավորների ընտրությունները տեղի յեն ունենում ընդհանուր կամ պատգամավորական ժողովներում, չնչպես և միության քաղաքային ու գավառային կոնֆերենցիաներում: Նահանգական համագումարի պատգամավորների ընտրական նորման, ի հարկե, համապատասխան չափով բարձր կլինի, քան թե գավառական համագումարի պատգամավորների ընտրական նորման եր, վորովհետև նահանգում ավելի շատ միության անդամներ կան, քան թե վորեւ գավառում: Այդ նորման մոտավորապես տատանվում է այս սահմաններում—500—3000 հոգուց մեկ հոգի, նայած թե տվյալ նահանգում վորքան միության անդամներ կան:

Նահանգական համագումարը, միութենական աշխատանքների բոլոր հիմնական հարցերը վճռելուց հետո, մշտական աշխատանք տանելու համար ընտրում է միության նահանգական բաժնի վարչություն, մեկ տարի ժամանակով, բաղկացած մոտ 5—25 անդամից և 2—5 թեկնածուից:

Այստեղ նկատենք, վոր ազգային հանրապետություններում, (որինակ Ուկրաինիայում Հայաստանում և այլն) կազմվում են միության հանրապետական կենտրոնական վարչություններ, վորոնք ղեկավարում են միութենական ամբողջ աշխատանքը՝ տվյալ հանրապետության սահմաններում:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ, ՎՈՐ ԸՆՏՐՎՈՒՄ Ե ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ, ՄԻՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆՆ Ե

Այժմ մենք հասնք միության ամենաբարձրագույն մարմին. ան է՝ առնվառնի համամիութենական (ամբողջ ԽՍՀՄ-ի) համագումարին:

Այդ համագումարը հրավիրվում է 2 տարին մեկ անգամ և ամբողջ միության ամենաբարձր մարմինն է հանդիսանում: Նրա վորոշումներն անպատճառ պարտադիր են միութենական բոլոր մարմինների համար: Համամիութենական համագումարի պատգամավորները, վոր ներկայացուցիչն են միութենական ամբողջ մասսայի, ընտրվում են նահանգական (կամ հանրապետական) համագումարներում ու կոնֆերենցիաներում:

Համամիութենական համագումարը մշտական աշխատանքի համար ընտրում է միության կենտրոնական Կոմիտե (2 տարի ժամանակով) բաղկացած մոտ 25—40 անդամից և 5—7 թեկնածուից: Տեղերի հետ ավելի սերտ կապ պահելու համար Համամիութենական համագումարը աշխատում է կենտրոնական Կոմիտեյի մեջ ընտրել ԽՍՀՄ-ի խոշորագույն վայրերի ներկայացուցիչներին: Վորովհետև կենտ-կոմի ամբողջական կազմը (պլենումը) բավական մեծ ու լայնածավալ է և տեղերի ներկայացուցիչների համար դժվար է լինում հաճախակի նիստերի գալ, դրա համար ել կենտ-կոմը նիստ է ունենում արվա մեջ չորս անգամ միայն, յերեք ամիսը մեկ անգամ: Մնացած ժամանակը աշխատանքը տանում է նախագահությունը, վոր ընտրվում է կենտ-կոմի կազմից, բաղկացած 5-7 հոգուց: Նախագահության անդամները միութենական ամբողջ աշխատանքը բաժանում են իրենց մեջ:

Այստեղ նկատենք, վոր միայն կենտկոմը չէ, վոր նախագահություն է կազմում, տեղերում, միության խո-

շոր բաժիններում նույնպես, տեղական վարչութիւններէն կարող են ընտրվել նախագահութիւններ

Այսպիսով, միութեան կազմակերպման ձեւերը, իսկապէս վոր, միութեան բոլոր անդամներին, նույնիսկ ամենահետամնացներին, հնարավորութիւն են տալիս ակտիվ մասնակցութիւն ունենալ միութենական մարմինների կազմակերպմանը: Իսկ կազմակերպութեան կենտրոնացված ձևը ապահովում է միութեան յուրաքանչյուր ստորին մարմնի յենթարկումը իրենից բարձր միութենական կազմակերպութեանը, իսկ դա միանգամայն համապատասխանում է ամբողջ միութեան բոլոր անդամների մեջ միութենական ճիշտ աշխատանք տանելու պահանջներին:

ՀԱՐԿԱՎՈՐ ԵՆ ԱՐԴՅՈՔ ՄԻՋՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Մինչև այժմ մենք քննում եյինք միայն մի վորեն միութեան կառուցվածքը, գիտենալով, վոր բոլոր 23 միութիւններն ել կառուցված են այդ ընդհանուր կանոններով: Բայց միթե անհրաժեշտ չի բոլոր միութիւնների աշխատանքները նույնիսկ անհրաժեշտ չի բոլոր միութիւնները միատեսակ նպատակներ ու խնդիրներ են հետապնդում, ապա բոլորովին բնական է, վոր առանձին միութիւնների աշխատանքը նույնպէս պետք է համաձայնեցված լինի իրար: Ընդհանուր միութենական աշխատանքի շահերի տեսակետից չի կարելի թույլ տալ, վոր տեղական բաժինների վարչութիւններն ու միութիւնների բաժինները իրենց աշխատանքները կատարեն անհամաձայն, անհամապատասխան լինելով կապ ունենալով:

Արհեստակցական շարժման հին փորձը զգալ տվեց, վոր անհրաժեշտ է միջսխառնակալ մարմիններ կազմել: Այդ մարմինների գլխավոր խնդիրն է— համաձայնեցնել ու ղեկավար-

ել միութիւնների աշխատանքները՝ սվլալ վայրի տանալն: Նրանք հետևում են, վոր միութիւններն իրականացնեն միութենական բարձրագույն մարմինների, Համամիութենական համագումարի վորոշումները, հետևում են, վոր միութիւնները կատարեն իրենց ֆինանսական պարտականութիւնները, միութիւնների բոլոր անդամների համար ստեղծում են ամեն տեսակի կուլտուրական հիմնարկութիւններ (ակումբներ, գրադարան-ընթերցարաններ, ֆիզկուլտի հրապարակներ և այլն), մասնակցում են միութենական համագումարներին, միութեան անդամների կողմից ներկայացուցիչներ են ուղարկում խորհրդային ու անտեսական ամեն տեսակի հիմնարկութիւններ և այլն:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄՎՈՒՄ ՄԻՋՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

(Տես հավելված II.)

Այժմ նայենք, թե ինչպիսի միջմիութենական մարմիններ ունենք:

Գալառում, տեղական բոլոր միութիւնների անդամներն իրենց ներկայացուցիչների միջոցով, գալառական միջմիութենական համագումարում ընտրում են գալառաւոր, այլ կերպ ասած՝ մարմնասակցակալ միութիւնների գալառական բաժինների աշխատանքներին:

Միութիւնների գալառային բյուրոները յենթարկվում են արհմիութիւնների նահանգական խորհրդին: Նահանգական խորհուրդ ընտրում են տեղական միութիւնների անդամները, ի հարկէ, միութիւնների նահանգային համագումարում, իրենց պատգամավորների միջոցով:

ՀԱՄԿԻ-Ի ԽՍՀՄ-Ի ԱՐԶՆԱՐԺՈՒՄԸ ՂԵԿԱՎԱՐՈՂ ԿԵՆՏՐՈՆՆ Ե

Վերջապես, բոլոր Կենտրոնական Կոմիտեների ու միջ-միութենական մարմինների աշխատանքներն իրար համա-ձայնեցնելու համար, մեր արհարծման մեջ կազմակերպ-չական լիակատար միություն ստեղծելու համար և վեր-ջապես դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը վերջնա-կանապես իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ մի կենտրոն, վորը միացնեք բոլոր միությունների աշխա-տանքների բոլոր թեկերը և ղեկավարեք այդ աշխատանք-ները, այն հիմունքով, վոր մյուս բոլոր կազմակերպու-թյուններն անպայման յենթարկվեն նրան: ԽՍՀՄ-ի ար-հեստակցական շարժման այդպիսի կենտրոն և հանդիսա-նում ԽՍՀՄ-ի Արհմիությունների Համամիութենական Համագումարը, վորը մշտական աշխատանքի համար ընտ-րում է ՀԱՄԿԻ—Համամիութենական Արհեստակցական Միությունների Կենտրոնական Խորհուրդ:

1924 թվի նոյեմբերին տեղի ունեցավ Համամիութե-նական վեցերորդ համագումարը (մինչև 6-րդ համագու-մարը նրանք կոչվում էին Համառուսական), վորին ամեն մի միություն 10 հազար հոգուց մեկ պատգամավոր եր ուղարկել: Ահա այդ համագումարում ընտրվեց ՀԱՄԿԻ-ի ներկա կազմը, վոր բաղկացած է 150 անդամից և 80 թեկնածուից:

Ինչպես վոր միություններից ամեն մեկը, այնպես ել ՀԱՄԿԻ-ն ունի իր նախագահությունը: ՀԱՄԿԻ-ի նա-խագահն է ընկեր Տոմսկին, իսկ քարտուղարը ընկ. Դոգա-դովը:

ՀԱՄԿԻ-ն ուղղություն է տալիս բոլոր 23 միություն-ների Կենտկոմների աշխատանքներին և ղեկավարում է տեղական միջմիութենական մարմիններին ու արհմիու-թյուններին նահանգական խորհուրդների աշխատանքները:

ԻՆՉՈՒՒ ՀԱՄԱՐ ԵՆ ԿԱԶՄՎՈՒՄ ՎԵՐՍՏՈՒԳԻԶ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Ամեն մի զործարդումի (կամ տեղկումի), միության վարչության, կենտկոմի կամ միջմիութենական մարմնի ընտրության հետ միաժամանակ և նույնքան ժամանակով ընտրվում է և վերստուգիչ հանձնաժողով՝ բաղկացած 3—5 անդամից և 2—3 թեկնածուից:

Վերստուգիչ հանձնաժողովն իրավունք չունի խառ-նվելու վարչության զուտ միութենական աշխատանքնե-րին: Նա միայն վերստուգման է յենթարկում նրա վար-չական-տեխնիքական, անտեսական ու ֆինանսական գոր-ծունեյությունը (գործավարությունը, ամետայի պահպա-նությունը, ինվենտարի գնումները, հաշվապահության ճշտությունը, կանխիկ դրամների հաշիվը և այլն):

Սովորաբար վերստուգումները զուգադիպվում են ընդհանուր ժողովներին ու համագումարներին, բայց, վորպես կանոն, կատարվում են պարբերաբար և կանո-նավոր: Վերստուգիչ հանձնաժողովը միության վարչու-թյան նման հաշվետու է իրեն ընտրողների առաջ, ստուգ-ման հետևանքները հայտնում է վերստուգման յենթարկ-ված ու բարձրագիւր միութենական մարմիններին և ան-ճշտություն կամ չարաշահություն հայտարարելու դեպքում անհրաժեշտ միջոցներն է ձեռք առնում:

ԻՆՉՈՒՒ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՍԵԿՑԻԱՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ

Այժմ մեզ մնաց քննել միությանը կից սեկցիայի նշանակության հարցը:

Շնորհիվ այն հանգամանքի, վոր մեր միությունները կառուցված են արտադրական հիմունքներով, այդ պատ-ճառով ել յուրաքանչյուր միություն ընդգրկվում է ամենա-

բազմազան արհեստների ու մասնագիտությունների բան-
վորներ ու ծառայողներ: Այսպես որինակ՝ անուշիկ արտա-
դրողների միության մեջ են մտնում և՛ ծխախոտագործ-
ները և՛ հացթուխները և՛ ալրաղացները, ծառայողներ և
այլն: Բժշկասանիտարական միության մեջ են մտնում և՛
և բժիշկները և հիվանդանոցների ծառայողները և այլն
այլն: Կասկած չկա, վոր բժիշկն ունի իր առանձին կա-
րիքները, վորոնք բոլորում են նրա աշխատանքի առանձնա-
հատկությունից և բոլորովին տարբերվում են հիվանդա-
նոցի ծառայող-բանվորի կարիքներից: Մի խոսքով, շատ
զբաղմունքներ ունեն իրենց հասուկ աշխատանքային պա-
հանջներ: Այնինչ միության նպատակն է, վոր միասնա-
վասար կերպով ծառայի բոլոր բանվորների ու ծառա-
յողների շահերին, անկախ այն դրությամբ, վոր նրանք
ունեն պարտադրյալ մեջ: Այդ բանին հասնելու հա-
մար, միության ալրագան մասսային լավագույն կերպով
ծառայելու նպատակով միությունը կազմում է, այսպես կոչ-
ված՝ սեկցիաներ: Այսպես որինակ՝ անուշիկ արտադրողների
միության մեջ կազմվում է հացթուխների սեկցիա, բժշկա-
սանիտարական միության մեջ—բժշկական սեկցիա, լու-
սաշխի մեջ մամուլի աշխատակիցների սեկցիա և այլն:

Սեկցիան մի ուսանողական մարմին է միայն, վորին
հանձնարարվում է մանրամասնորեն ուսումնասիրել միու-
թյան անդամների այս կամ այն խմբակի աշխատանքի
պայմանները, կարիքներն ու պահանջները: Սեկցիայի գո-
յությունը միասնական արտադրական միությունը ամենե-
վին ել չի բաժանում մանր անկախ միությունների: Սեկ-
ցիան իրավասու չի ինֆլուենցիա վորոշումներ կայացնե-
լու, այլ միայն զանազան առաջարկություններ է մտցը-
նում միության վարչության նիստը՝ ի տնորինություն:
Այսպիսով ուրեմն, սեկցիան միութենական մասսային ծա-
ռայելու միջոցներից մեկն է, վորը չի խախտում միութե-
նական կազմակերպության միասնականությունը:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յեթե ի մի բերենք մեր ասածները մեր միություն-
ների կառուցվածքի մասին, կզանք հետևյալ յեզրակացու-
թյան:

Մեր միությունները կառուցված են արտադրական
սկզբունքով («մեկ ձեռնարկություն—մեկ միություն»),
և ՍՀՄ-ի պետական վարչական բաժանման որինակով՝
պահպանելով դեմոկրատական ցենսրալիզմի սկզբունքը:

Միութենական բոլոր մարմինները սկսած ամենացա-
ծից մինչև ամենաբարձրը, ընտրված են մասսայից, անմի-
ջականորեն, կամ նրա ներկայացուցիչ պատգամավորների
միջոցով:

Միութենական բարձրագույն մարմինը, վոր վճռում
է միութենական աշխատանքի բոլոր հարցերը—դա տվյալ
տեղի համագումարն է, վորը մշտական աշխատանքի հա-
մար ընտրում է վարչություն: Այդ վարչությունը ըստ-
ամենայնի պատասխանատու չէ իրեն ընտրող համագու-
մարի առաջ: Ընտրված վարչությունը իր հերթին պա-
սախտանալով չէ նաև բարձրագույն միութենական մարմնի
առաջ:

Միության ամենաբարձր մարմինը միության կեն-
տրոնական կոմիտեն է, վորտեղ կենտրոնացված է միու-
թյան ամբողջ ղեկավարությունը:

Տեղական բաժինների ու զանազան միությունների
բաժանմունքների աշխատանքները իրար համաձայնեցնե-
լու և միացնելու համար ստեղծված են միջմիութենական
մարմիններ:

Ամենաբարձր միջմիութենական մարմինը ՀԱՄԿԽ-ն է,
վորը, ինչպես միասնական կենտրոն, ղեկավարում և ուղ-
ղություն է տալիս ՍՀՄ-ի ամբողջ արհեստակցական
շարժմանը:

Այսպիսով, ՍՀՄ-ի ամբողջ արհեստակցական շար-

ժուլմը վերից վար հանգիտանում է միասնական ավարտ-
ված մի ամբողջութիւն: Դա ամենահամապատասխան
ձևն է, վորով կարելի չէ կազմակերպված պայքար մղել
բանվորների դրութիւնը լավացնելու համար և հասնել
կոմունիզմին, այն նպատակին, վոր առաջադրել են իրենց
մեր արհմիութիւնները:

ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՅԵՐ.

1. Ինչո՞ւ բանվորական մասսան ինքը չի կատարում
միութենական առօրյա աշխատանքը:
2. Ի՞նչպիսի միութենական մարմիններ կան, ինչի՞
համար են և վորտե՞ղ են կազմվում:
3. Ինչո՞ւ բացի ընդհանուր ժողովներից գոյութիւն
ունեն և պատգամավորական ժողովներ:
4. Ինչո՞ւ միեւնոյն արտադրութիւն բանվորները
հույն միութիւն անդամներ են և միաժամանակ յերկու
միութիւն անդամ լինել չեն կարող:
5. Ոգուտ կունենա՞ր միութենական աշխատանքը ար-
տադրութիւն մեջ, յեթե մեր միութիւնները կառուցված
լինեյին ըստ համաքարութիւն կամ ըստ արհեստների—զբաղ-
մունքների:
6. Ի՞նչ սահմաններում են ընդգրկում բանվորներին
ու նրանց մեջ միութենական աշխատանք տանում—զոր-
ծարկումները, գավաթիները, նահանգային բաժինները և
միութիւն կենտրոնական կոմիտեն:
7. Ինչո՞ւն է կայանում դեմոկրատական ցենարալիզ-
մը մեր արհշարժման մեջ:
8. Բանվորներն ու ծառայողները ինչպե՞ս են մաս-
նակցում միութենական բոլոր մարմինների ընտրութիւն-
ներին:

9. Միութիւններից ամեն մեկն ի՞նչ միութենական
բարձր մարմիններ ունի—գալառում, նահանգում, (ա-
ռանձին հանրապետութիւն մեջ) և ամբողջ ԽՍՀՄ-ում:
Վորքա՞ն ժամանակը մի անգամ են նրանք գումարվում և
ընդմիջումների ժամանակ ո՞ւմ են հանձնարարում միու-
թենական ընթացիկ աշխատանքն ու ընդունված վորոշում-
ների կատարումը:

10. Ինչպե՞ս են համաձայնեցվում առանձին միու-
թիւնների աշխատանքները:

11. Ինչպիսի միջմիութենական մարմիններ կան և
ի՞նչ են անում նրանք:

12. Վո՞ր մարմինն է ամենաբարձր ղեկավար մարմինը
ամբողջ ԽՍՀՄ-ի արհշարժման համար, վորտե՞ղ և յերբ
և յեղել այդ մարմնի վերջին ընտրութիւնը:

13. Ինչի՞ համար և վորտե՞ղ են կազմվում վերստու-
գիչ հանձնաժողովները:

ՀԱՎԵԼՎԱԾ I.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ընտրվում է արհմիության համամիութե-
նական համագումարում, բաղկացած մոտ
25-40 հոգուց, 2 տարի ժամանակով:

Համամիութենական համագումարի պատգա-
մավորներն ընտրվում են միության նախագա-
կան համագումարներում:

Կենտկոմը ղեկավարում է ԽՍՀՄ-ի ամբողջ
միութենական աշխատանքը: Անմիջականորեն
նրան են յենթարկվում նախագահական բաժին-
ները (հանրապետական, մարզային (օձգատ.)
բաժինները):

Կենտրոնական Կոմիտեն իր գոյությունը
պահում է ստացված հատկացումներով, վեր-
կատարվում է անդամավճարների մուտքից
նախագահական բաժիններից:

ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Ընտրվում է արհմիության նախագահական
համագումարում, բաղկացած մոտ 9-25 հոգուց,
մեկ տարի ժամանակով:

Նախագահական համագումարի պատգամավոր-
ներն ընտրվում են գավառական համագումար-
ներում և խոշոր ձեռնարկությունների ընդհա-
նուր ու պատգամավորական ժողովներում:

Նախագահական բաժնի վարչությունը միու-
թենական աշխատանք է տանում ամբողջ նա-
խագում: Անմիջականորեն նրան են յենթարկ-
վում նախագահական քաղաքի գործարկումներն
ու գավառական բաժինները:

Նախագահական բաժնի իր գոյությունը պա-
հում է գործարկումների ու գավառական բա-
ժիններից ստացված անդամավճարներով:

ԳԱՎԱՌԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Ընտրվում է միութենական գավառական հա-
մագումարում կամ կոնֆերենցիայում, բաղկա-
ցած մոտ 7-9 հոգուց, մեկ տարի ժամանակով:

Գավառական համագումարի պատգամավոր-
ներն ընտրվում են ձեռնարկությունների ընդ-
հանուր և պատգամավորական ժողովներում:

Գավառական վարչությունը միութենական
աշխատանք է տանում ամբողջ գավառում:
Նրան են յենթարկվում գավառի գործարտեղ-
կումները:



Գավառական գավառի անդամավճարների մի-
մասը, ըստ նախագահական բաժնի հաստատած
նախաճաշի, պահում է իր կարիքների համար:
Մնացած գումարը հանձնվում է նախագահական
բաժնին:

ԳՈՐԾԱՐՏԵԼԿՈՍ

Ընտրվում է ձեռնարկության ընդհանուր կամ
պատգամավորական ժողովներում, բաղկացած
մոտ 3-15 հոգուց, 6 ամիս ժամանակով:

Ձեռնարկության մեջ տանում է ամբողջ
միութենական աշխատանքը:

Իր գոյությունը պահում է ձեռնարկության
կատարած հատկացումով:



Ընտրվում է ԽՍՀՄ-ի բոլոր
արհմիությունների համամիութե-
նական համագումարում, բաղկա-
ցած 150 հ., 2 տարի ժամանակով:
Համամիութենական համագումարի
պատգամավորներն ընտր-
վում են ԽՍՀՄ-ի ամեն մի միու-
թյան նախագ. համագումարնե-
րում ու կոնֆերենցիաներում:
ՀԱՄԿԽ-ը ամբողջ ԽՍՀՄ-ի
արհմիությունը ղեկավարող բարձ-
րագույն մարմինն է: Ուղղություն
է տալիս բոլոր կենտկոմների աշ-
խատանքներին և ղեկավարվում է
Արհմիությունների նախագահական
Խորհուրդների աշխատանքները:
Իր գոյությունը պահում է
կենտկոմներից ստացվող տոկոսային
հատկացումներով (յուրաքանչյուր
կենտկոմի մուծումների 10-15
տոկոսով):

ԱՐԶԵՍԱԳԱՆ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ընտրվում է նախագ. բոլոր
միությունների նախագ. համա-
գումարում, 1 տարի ժամանակով:

Այդ համագումարի պատգամա-
վորներն ընտրվում են յուրա-
քանչյուր միության նախագահական
համագումարներում և կոնֆե-
րանսներում:

Արհմիությունների նախագա-
կան Խորհուրդը ուղղություն է
տալիս միությունների նախագա-
կան բաժինների աշխատանքնե-
րին և ղեկավարում է իրեն յեն-
թակա գավառի քաղաքների աշ-
խատանքները:

Իր գոյությունը պահում է յու-
րաքանչյուր նախագահական բա-
ժինների մուծումների 10 տո-
կոսային հատկացումով:

ԱՐԶԵՍԱԳԱՆ ԳԱՎԱՌԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

Ընտրվում է բոլոր միություն-
ների գավառային համագումա-
րում (մեջմիութենական համա-
գումարում) 1 տարի ժամանակով:

Միությունների գավառային
համագումարի պատգամավորներն
ընտրվում են յուրաքանչյուր
միության գավառային համագու-
մարում և նրանց ընդհանուր քա-
ղաքային կոնֆերենցիաներում:

Գավառի քաղաքային ուղղություն
է տալիս միությունների գավա-
ռային աշխատանքներին:

Իր գոյությունը պահում է ըստ
Արհմիությունների նախագահական
Խորհրդի հաստատած նախաճաշի:



ԳԻՆՆ Ե 25 ԿՈՊԵԿ